

եւ անճառ զօրութիւն ըստ վարդապետին Պատարի՝ «Բրիտոսս Աստուծոյ զօրութիւն եւ Աստուծոյ իմաստութիւն», գարոց է ինքն Որդին Աստուծոյ եւ Աստուած, որպէս եւ խոստացաւ, դատել զկենդանիս եւ զմեռեալս, որպէս ասէ Առաքեալն. «Դատիչն զձածկոյթս խաւարի, եւ յայտնողն զխորհուրդս սրտից եւ զգովութիւն եւ զանգոսնումն ըստ արժանաւորութեան վերբերող զիրարանչիրն»:

«Իսկ եթէ որ քան զայս յաստուածայնոց գրեւոցն ուսուցանէ՝ միւս ասելով զՈրդին Աստուծոյ, եւ միւս՝ ի Մարեմայն մարդ, կամ եթէ որ զՏեառն մերոյ մարմինն ի վերուստ ասէ եւ ոչ ի Կուսէն Մարիամայ, կամ յեղեալ զաստուածութիւնն ի մարմին, կամ խառնեալ կամ այլայլեալ, կամ ախտակիր զՈրդոյն աստուածութիւնն, կամ աներկրագելի զՏեառն մերոյ մարմինն, որպէս մարդոյ, եւ ոչ երկրագելի իբրեւ Տեառն եւ Աստուծոյ, զաս նզովէ սուրբ եւ ընդհանրական եկեղեցի, հասանեալ աստուածազան Առաքելոյն ասողին. «Եթէ որ ձեզ ասեալարանէ քան զոր առէքն, նզովեալ եղիցի»:

Յայտնի է որ աս հաւատոյ դաւանութեան կամ հանգանակի մեկնութեան մէջ, եւ զլուսորարար անոր նզովքին մէջ՝ որն որ Կիլիկիանին ձեւովը շնուած է, կամ փոփէ սուրբ Եթանաս՝ ինչ որ աս Կպիկտեսոս Արնթացոց եպիսկոպոս գրած թղթոյն մէջ խօսած է:

Սեր հանգանակին դառնալով՝ հիմայ կրնանք քիչ մ՝ աւելի ճշգեւ աս հանգանակին յօրինման ժամանակը:

Եթանաս առաջին անգամ հրապարակաւ դէմ ելաւ Եպոզինարի Լաւողիկեցոց մտորութեանը, 362ին Աղեքսանդրիոյ սրէնհօդոսին մէջ. իսկ իրեն աս Կպիկտեսոս թուղթը գրուած է 371ին. ուրեմն մեր հանգանակը՝ որն որ Եպոզինարեան մտորութիւնը կը մերժէ, իսկ կրկին անձանց մտորութեան վրայ խօսք չ'ընէր, չէ կրնար շնուած ըլլալ՝ ոչ 362էն առաջ եւ ոչ 371էն ետքը: Իբօք ալ ան երրորդ հանգանակի ձեւը՝ զորն որ վերը Ս. Կպիկտանէն յառաջ բերինք՝ որ իր «Խարսխեալ», ըսուած գիրքը 374ին գրած է, կ'ենթադրէ կամ թէ ըսեմ՝ իրեն հիմ ունի երկրորդ ձեւը կամ մեր հանգանակը, եւ ուրիշ բան չէ՝ բայց եթէ ասոր ճոխացուցումն: Ուստի թէ արդեօք նաեւ աս վերջին ճոխացուցումն ալ սուրբ Եթանաս († 373) ըրած է թէ չէ, կը մնայ անորոշ: Արնանք ուրեմն շատ պատշաճութեամբ մեր հանգանակն ասկէ ետքը անուանել՝ ՆիկիԱԿԱՆ-ԱԹԱՆԱՍՆԱՆ առանց շփոթելու ուրիշ հանգանակի մը հետ՝ որն որ Աթանասուսեան կ'ըսուի, եւ կը սկսի այսպէս. «Որ որ կամեսցի փրկել»: